

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 50/3**

**27 նոյեմբերի 2015 թ.**

Քննարկվեց «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշման դեմ:

#### **«ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշման մեջ նշված է, որ «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) կողմից իրացվել է 15400 դրամի դրոշմավորված ապրանքներ, որը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, ՕՀՎ աշխատակիցների կողմից իրականացված ստուգման ժամանակ պարզվել է, որ 110 հատ 1.5 լիտրանոց գազավորված ընպեյիքները դրոշմավորված 0.5 լիտրանոց դրոշմապիտակներով գտնվել են ընկերությանը պատկանող պահեստային մասում, այլ ոչ թե իրացման համար նախատեսված վայրում:

Ընկերությունը չունի վաճառքի կետ և չի զբաղվում մանրածախ առևտրով:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2015 թ-ի թիվ 5101947 հանձնարարագրի համաձայն «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ նշանների (դրոշմապիտակների) կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.09.2015 թ-ի թիվ 5101947 ակտը (այսուհետ նաև Ակտ):

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ սույն թվականի օգոստոսի 28-ին ժամը 12:00-ի սահմաններում ստուգումն իրականացնող անձինք այցելել են ք.Երևան, Սեբաստիա 3ա հասցեում գտնվող «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ-ին պատկանող գազավորված ընպեյիքների արտադրամաս: Ստուգման պահին արտադրամասը չի գործել, սակայն արտադրամասում առկա են եղել հետևյալ գազավորված ընպեյիքները (դրոշմավորված).

1. «Ռադուգա» 2 լ. 4206 հատ, 1 հատի գինը 120 դրամ, ընդամենը 504720 դրամ:

2. «Սենտա» 1.5 լ. 2304 հատ, 1 հատի գինը 140 դրամ, ընդամենը 322560 դրամ:

3. «Սենտա» 0.5 լ. 528 հատ, 1 հատի գինը 70 դրամ, ընդամենը 36960 դրամ:

4. «Թան» 0.5 լ. 528 հատ, 1 հատի գինը 70 դրամ, ընդամենը 36960 դրամ:

Արտադրամասում առկա են եղել նաև դրոշմապիտակներ (տեղական)՝ 28387 հատ:

Արտադրամասում առկա պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների գծով չդրոշմավորման դեպքեր չեն բացահայտվել: Դրոշմավորված ապրանքների գծով դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնների պահպանման վերաբերյալ կատարվել է «Tax Stamp» համակարգով համեմատություն, որի արդյունքում հայտնաբերվել է 110 հատ 1.5 լիտրանոց «Սենտա» գազավորված ըմպելիք, 1 հատի գինը 140 դրամ, ընդամենը 15400 դրամ, որոնք դրոշմավորված են եղել 0.5 լիտրանոց դրոշմապիտակներով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության 3-րդ բաժնի կողմից 23.10.2015 թ-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1044 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է, որ «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ տնօրեն Կարեն Ավետիսյանը, համաձայն ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.09.2015 թ-ի թիվ 5101947 ակտի, իրացրել է որոշակի տարողության համար տրամադրված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներ՝ ընդհանուր գումարով 15.400 դրամ, որի համար նախատեսված է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.9-րդ հոդվածով: Այնուհետև ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 23.10.2015 թ-ի 1044 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ տնօրեն Կարեն Ավետիսյանը, համաձայն ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.09.2015 թ-ի թիվ 5101947 ակտի, իրացրել է որոշակի տարողության համար տրամադրված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված (դրոշմավորված) ապրանքներ՝ ընդհանուր գումարով 15.400 դրամ: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.9-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Կարեն Ավետիսյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու՝ 500.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ տնօրեն Կարեն Ավետիսյանը, համաձայն ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.09.2015 թ-ի թիվ 5101947 ակտի, իրացրել է որոշակի տարողության համար տրամադրված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ՖՆ ՕՀՎ 02.09.2015 թ-ի թիվ 5101947 ակտն արձանագրեց, որ դրանում առկա չէ որևէ գրառում «ԱԳԱԿ ընկերներ» ՍՊԸ կողմից որոշակի տարողության համար տրամադրված հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված (դրոշմավորված) ապրանքներ իրացվելու վերաբերյալ: Ավելին, ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ վերոգրյալ ապրանքները՝ գումարով 15.400 դրամի, ի տնօրինություն են վերցվել ընկերության արտադրամասի պահեստային տարածքից:



Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.9-րդ հոդվածի համաձայն. «Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով և (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Իր հերթին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. « Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը»:

Վերոգրյալից հետևում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.9-րդ հոդվածի կիրառման համար պարտադիր է հոդվածում մատնանշված ապրանքների իրացման փաստի առկայությունը, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում չի արձանագրվել Ակտում հիշատակված ապրանքների իրացման որևէ դեպք, Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.9-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը քննարկվող դեպքում կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 303631/03 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ